ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

DEPUTY CHAIRPERSON OF THE CENTRAL ELECTORAL COMMISSION
OF THE REPUBLIC OF ARMENIA

N 02/11/1439

«04» 08 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆԻՆ

Ազգային ժողովի մեծարգո նախագահ,

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ կից ներկայացնում եմ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդումը, որը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի համաձայն տեղադրվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Հարգանքով՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահի պարտականությունները
ժամանակավոր կատարող

ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ, ք. Երևան,0009, Գ. Քոչարի 21ա, հեռ. +374 (10) 56 31 96
21a, G. Kochar Str., 0009, Yerevan, Armenia, tel.: +374(10) 56 31 96
Էլ. փոստ/E-mail: HovhannisyanN@elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

www.elections.am

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

www. elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր ակնարկ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահը հրապարակում է հրամանագիր քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 90 օր առաջ:»:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի «Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-21-Ն հրամանագրով Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2026 թվականի հունիսի 7-ին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է 2026 թվականի հունիսի 7-ին՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվել է 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) 2026 թվականի հունվարի 23-ին (ՀՕ-2-Ն) և 2026 թվականի ապրիլի 7-ին (ՀՕ-35-Ն) կատարվել են փոփոխություններ ու լրացումներ, և մի շարք իրավահարաբերություններ ենթարկվել են նոր կանոնակարգումների:

Ընտրական օրենսգրքում ամրագրված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք ապահովում են լիակատար թափանցիկություն և վերահսկողություն ընտրական գործընթացների բոլոր փուլերի նկատմամբ: Մասնավորապես՝

1) ընտրողների ռեգիստրը որոնման հնարավորությամբ մշտապես տեղադրված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում: Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ ընտրողների ռեգիստրը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր և 7 օր առաջ տեղադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ,

2) ընտրողների նախնական և վերջնական ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ,

3) Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների ժամանակ 300-ից ավելի ընտրող ունեցող բոլոր ընտրական տեղամասերից (թվով՝ 1757) իրականացվել է քվեարկության ամբողջ ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և հեռարձակում համացանցով՝ ուղիղ ժամանակային ռեժիմում,

4) առաջին անգամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ իրականացվել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի և վերահաշվարկի աշխատանքների տեսաձայնանկարահանում և հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում,

5) քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00.00-ից սկսած, իրականացվել է քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնելու հնարավորությամբ՝ տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում, իսկ ընտրության արդյունքներով որոշումն ընդունելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվել է քվեարկության արդյունքների վերջնական աղյուսակավորումը,

6) համացանցում ներբեռնման հնարավորությամբ հրապարակվել են ընտրողների ստորագրած ցուցակները. բացառությամբ՝ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմված և քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների (ԿԸՀՈ Ν 6-Ն, 11.01.2017թ,),

7) առաջին անգամ համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 36 ժամ հետո, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվել են քվեարկության արդյունքների արձանագրություններից քաղվածքներ՝ ներբեռնելու հնարավորությամբ,

8) ընտրության նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակվել են տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը, անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման

մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը, մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը, տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը, տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում է վերոնշյալ ինստիտուտների, ինչպես նաև այլ ինստիտուտների և գործիքակազմերի միաժամանակյա գործողությունը՝ ապահովելով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար լիակատար վերահսկողություն և ըստ անհրաժեշտության խախտված իրավունքների պաշտպանության իրականացում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 36-րդ և 44-րդ հոդվածներին համապատասխան գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և թվով 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Ընտրական օրենսգրքի 16-րդ և 18-րդ հոդվածներին համապատասխան հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2005 ընտրական տեղամաս և սահմանվել՝ 2005 տեղամասային կենտրոններ, որից 9-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (հիմք՝ Ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մաս և 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվել են թվով 13 տեղական դիտորդական առաքելություններ՝

- «Համայնքի երիտասարդներ» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը,
- «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունը,

- «Ազատ քվե» միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելությունը,
- «Ականատես» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելությունը,
- Անկախ դիտորդ հասարակական դաշինք միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելությունը,
- «Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ» հասարակական կազմակերպությունը,
- «Արժանապատիվ սպա» իրավա-սոցիալական հասարակական կազմակերպությունը,
- «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը,
- «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպությունը,
- «Լուսաստղ» բարեգործական հասարակական կազմակերպությունը,
- «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը,
- «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը:

Տեղական դիտորդական առաքելությունները գրանցել են ընդհանուր թվով 2668 դիտորդ:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել թվով 7 միջազգային կազմակերպություններ և մեկ օտարերկրյա հասարակական կազմակերպություն.

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ),
- ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողով,
- ԱՊՀ դիտորդական առաքելություն,
- ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողով,
- ԵԽԽՎ (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով),
- ՖՄԿ (Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն),
- Եվրոպական խորհրդարան

- Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI):

Միջազգային դիտորդական առաքելությունների կողմից գրանցվել են ընդհանուր թվով 647 միջազգային դիտորդներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրավերով այլ պետությունների ընտրական մարմինների 38 ներկայացուցիչներ ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացրել են ընտրական գործընթացի դիտարկում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրել է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված 35 դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների 125 ներկայացուցիչների՝ այցելուի կարգավիճակով ընտրական գործընթացի դիտարկման նպատակով:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունները լուսաբանելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրել է տեղական 71 զանգվածային լրատվության միջոց: Նրանցից 17-ը՝ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցներ են: Տեղական ԶԼՄ-ները ընդհանուր գրանցել են 647 լրագրող:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունները լուսաբանելու նպատակով հավատարմագրվել են 84 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցի 188 ներկայացուցիչ, որոնք լուսաբանել են ընտրությունների և քվեարկության ընթացքը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 15.915 քաղաքացիներ: Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների մասնագետների թիվը կազմել է 4 128:

Ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն ապահովվել է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման մեջ գտնվող զինծառայողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների ընտրելու իրավունքը: Էլեկտրոնային քվեարկության համակարգն ապահովում է էլեկտրոնային քվեատուփում գտնվող և հետագայում հաշվարկվող քվեների անանունությունն ու ընտրողի և իր քվեի միջև կապի վերակառուցման անհնարինությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի N 32-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ էլեկտրոնային քվեարկության ողջ գործընթացը բաց, թափանցիկ և հրապարակային դարձնելու և հանրային վստահությունն ապահովելու նպատակով էլեկտրոնային քվեարկության ծրագրային կոդերը տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ազգային ժողովի 2026թ. հերթական ընտրության էլեկտրոնային եղանակով արտերկրից իրականացվող քվեարկությունը կազմակերպվել է 2026 թվականի մայիսի 29-ից Երևանի ժամանակով 08:00-ից մինչև մայիսի 31-ը ժամը՝ 20:00-ն: Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեցող թվով 537 քաղաքացիներից էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցել են թվով 410-ը:

Ազգային ժողովի հերթական ընտրության քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2026 թվականի հունիսի 8-ին, իսկ վերջնական արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է 2026 թվականի հունիսի 14-ին:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը

Իրավական ակտերի ընդունում

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունը, ինչպես նշել ենք կազմակերպվել և անցկացվել է 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, ուստի բոլոր ենթաօրենսդրական ակտերն արդեն իսկ ընդունված էին: ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքներով սահմանված նոր իրավակարգավորումների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվեցին, իսկ գործող ենթաօրենսդրական իրավական ակտերը համապատասխան փոփոխությունների ու լրացումների ենթարկվեցին հնարավորինս սեղմ ժամկետներում՝ ապահովելով նոր իրավակարգավորումների ամբողջական կիրարկումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները տեղադրվել են հանձնաժողովի պաշտոնական համացանցային կայքում, իսկ դրանցով իրականացվող կանոնակարգումները հաշվի են առնվել ընտրական գործընթացի մասնակիցների համար ուղեցույցները պատրաստելիս:

Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն աջակցում են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման աշխատանքներին: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների

ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած քաղաքացիները մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներին և ստուգարքին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնց՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած է ճանաչվել դասընթացների անցկացմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի մարտի 12-ից մինչև ապրիլի 29-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար կուսակցությունների և անհատ քաղաքացիների կողմից ներկայացվել էր 15.299 հայտ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել է թվով 10.438 քաղաքացի, որոնցից՝ 7.698-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները տեղադրված են եղել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով: Գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով զետեղված է եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր մարզերում:

Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը բողոքարկվել է վարչական կարգով ընդամենը 9 մասնակցի կողմից:

Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավանորմերի համաձայն 2026թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման վերաբերյալ գործնական դասընթացներ, որոնց ավարտից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպել է լրացուցիչ գործնական դասընթացներ՝ նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների համար:

Նշված դասընթացների կազմակերպման համար ժամանակահատվածը բավականին սահմանափակ է: Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են քվեարկության օրվանից 25 օր առաջ, առաջին նիստերն անցկացվում են քվեարկության օրվանից 22 օր առաջ: Կազմակերպված դասընթացի ընդհանուր տևողությունը կազմել է 19 օր, դասընթացներին մասնակցել է տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 14.874 անդամ: Կազմակերպված դասընթացներին ապահովվել է 87 տոկոս մասնակցություն: Նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների համար կազմակերպված լրացուցիչ գործնական դասընթացներին մասնակցել է 3.652 քաղաքացի, արդյունքում՝ ապահովվել է 91 տոկոս մասնակցություն:

Դասընթացների բոլոր մասնակիցներին տրամադրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար մշակված ուղեցույց:

Ուսումնական և գործնական դասընթացներ են կազմակերպվել և անցկացվել նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար:

Տեխնիկական սարքավորումների կիրառումն ընտրական գործընթացում

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների ժամանակ թվով 1996 տեղամասերում գործարկվել են 4.000 տեխնիկական սարքավորումներ (ընդհանուր թվով՝ կազմավորված է եղել 2005 ընտրական տեղամաս, որից 9-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, որտեղ տեխնիկական սարքավորումներ չեն գործարկվում (ԸՕ 66-րդ հոդված, մաս 9)):

2026 թվականի ապրիլի 30-ից մեկնարկել են տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքները: Ստուգվել են շուրջ 4380 տեխնիկական սարքավորումներ, 1570 անխափան սնուցման սարքավորումներ և 1500 երթուղիչներ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրվել է նաև ընդհանուր առմամբ՝ լրացուցիչ 327 տեխնիկական սարքավորում, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումն ապահովելու համար:

2026 թվականի մայիսի 8-ից մինչև մայիսի 10-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՄԱԶԾ «Արտեմիս» ծրագրի աջակցությամբ իրականացրել է ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումները սպասարկող և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 127 մասնագետների ուսուցումը: Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 15 օրվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ընտրական տեղամասում տեխնիկական սարքավորումները սպասարկող շուրջ 4.200 մասնագետների ուսուցում և ստուգարք:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ:

Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն տեխնիկական սարքավորման ծրագրային ապահովումն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկությունից առնվազն 20 օր առաջ պետք է հասանելի լինի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներին՝ տեխնիկական վերստուգում իրականացնելու համար և ընտրողների էլեկտրոնային ցուցակի նախապատրաստումը տեխնիկական սարքավորման մեջ տեղադրելու համար ենթակա է վերահսկման Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Նշված գործընթացի վերահսկողությունը կազմակերպվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, որի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա վերջինիս տրամադրվում է տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման վերստուգման համապատասխան կոդ: Հարկ է նկատել, որ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության, կուսակցությունների դաշինքի կողմից նման դիմում չի ներկայացվել:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 8 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

Տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն ունեին քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն: Թվով 1996 տեղամասերից՝ 541 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում, իսկ թվով 1455 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 906-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 549-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

2026թ. Սմարթմատիք («Smartmatic») ընկերությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով իրականացրել է տեխնիկական սարքավորումների վերանորոգման աշխատանքներ: Մասնավորապես, բոլոր սարքավորումների CMOS մարտկոցները փոխարինվել են նորերով, մոտ 202 սարքավորումների դեպքում նորերով են փոխարինվել մեծ մարտկոցները: Վերանորոգման աշխատանքների շրջանակներում վերանորոգվել, իսկ անհրաժեշտության դեպքում փոխարինվել են նաև սարքավորումների այլ մասեր:

Թվով 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործված 4000 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 137 տեխնիկական սարքավորման գործարկման հետ: Մասնավորապես, տարբեր տեխնիկական պատճառներով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 51 տեխնիկական սարքավորում, որոնցից 32-ը՝ քվեարկության նախորդ օրը, իսկ 19-ը՝ քվեարկության օրը: Գրանցվել են նաև տեխնիկական և ծրագրային առանձին

խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել: Թվով 3459 տեխնիկական սարքավորում աշխատել է սինքրոնիզացված և ընդամենը 2 ընտրական տեղամասում են խնդիրներ ծագել, որոնց անհապաղ լուծում է տրվել:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրությունների նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ամփոփել է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 20-ից ավելի ուղեցույց և ուսումնական ձեռնարկ (հուշաթերթ)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույցներ՝ վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված

ուղեցույցները հրապարակվել են նաև բրայլյան այբուբենով), քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ, տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների համար: Նշված ուղեցույցներից 2-ը հրապարակվել է նաև օտարալեզու (անգլերեն) թարգմանությամբ:

Հրատարակվել են հանրային իրազեկման հոլովակներ, տեղեկատվական բնույթի պաստառներ, այդ թվում՝ քվեարկության կարգի պարզաբանման վերաբերյալ պաստառներ ժամկետային զինծայառողների համար, որոնք առաքվել են զորամասեր:

Ազգային ժողովի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում իրականացվել է քաղաքացիական կրթության և ընտրողների իրազեկման լայնածավալ արշավ, անցկացվել է տարածված տեղեկատվական նյութերի մոնիթորինգ: Մոնիթորինգի են ենթարկվել տեղեկատվական 160 նյութեր, որոնք հրապարակվել էին թվային հարթակներում, հեռուստատեսությամբ և առցանց (offline) հաղորդակցման միջոցներով՝ 2026 թվականի մարտի 18-ից մինչև հունիսի 6-ը:

Գործողություններն իրականացվել են ՄԱԶԾ Հայաստանի (UNDP Armenia) գլխավորած բազմակողմ գործընկերային համագործակցության շրջանակում՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (TIAC), IFES-ի, International IDEA-ի, UK/Zuck-ի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների մասնակցությամբ:

Հանրային իրազեկման և ընտրողների կրթության արշավն ապահովել է շուրջ 4.8 միլիոն հասանելիություն՝ համադրելով հեռուստատեսային, թվային և առցանց հաղորդակցման գործիքներ, ընդգրկել է տարբեր թիրախային խմբեր և նպաստել է ընտրական գործընթացի վերաբերյալ իրազեկվածության, մասնակցության և ներառականության բարձրացմանը՝ պետական մարմինների, միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների սերտ համագործակցության միջոցով:

Հեռուստատեսությունն ու «Facebook» սոցիալական ցանցը միասին՝ ապահովել են ընդհանուր հասանելիության մոտ 92 %-ը: Հարկ է նկատել, որ տեղեկատվական արշավի շրջանակում առավել հասանելիություն են ապահովել կարճ տեսանյութերը (Reels) և հեռուստահաղորդումները, որոնք կազմել են ընդհանուր դիտումների շուրջ 89 %-ը, իսկ երկար ձևաչափի տեսանյութերը, որոնք հիմնականում հրապարակվել են YouTube-ում, ունեցել են միջինը 2,900 դիտում՝ յուրաքանչյուր նյութի համար:

Ըստ հաղորդակցման հարթակների և էջերի (Reach by Channel/Page) ամենաարդյունավետ հարթակը Հանրային հեռուստաընկերության «Գաղտնաբառ՝ Քաղաքացի» հաղորդաշարն էր, որի չորս թողարկումները միասին դիտվել են մոտ 1.74 միլիոն հեռուստադիտողի կողմից: Facebook-ում իրականացված «Շուտով ընտրություններ են» թեմատիկ արշավը բաղկացած էր չորս կարճ տեսանյութերից (Reels), որոնք ապահովել են ավելի քան 1 միլիոն հասանելիություն:

Բարձր արդյունքներ են արձանագրել նաև «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (TIAC) սոցիալական հարթակները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական էջը, ինչպես նաև Boon TV-ի «Դեմոս» հաղորդաշարը: Ամենամեծ թեմատիկ խումբը վերաբերում էր ընտրությունների կազմակերպմանն ու քվեարկության ընթացակարգերին, որոնց զգալի մասը մշակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և տարածվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի YouTube ալիքի միջոցով:

Boon TV-ի և TIAC-ի համագործակցությամբ ստեղծված «Դեմոս» հաղորդաշարի վեց թողարկումները հեռարձակվել են Boon TV-ով և միաժամանակ տարածվել սոցիալական մեդիայի միջոցով: Հաղորդումների թեմաներն ընդգրկել են՝ քաղաքացիական մասնակցության կարևորությունը՝ «Իմ ձայնը նշանակություն ունի՞», հանրային հաշվետվողականությունը՝ «Արդյո՞ք նրանք ճիշտ են», քաղաքական ներկայացվածությունը՝ «Ո՞վ է ներկայացնում ինձ»:

Ընտրական գործընթացի վերաբերյալ ապատեղեկատվության, մանիպուլյատիվ տեղեկատվության ճանաչման և հակազդման թեմաներով Հայաստանի ողջ տարածքում վերապատրաստվել է 325 երիտասարդ: Երիտասարդների և առաջին անգամ քվեարկողների համար պատրաստվել և վերջիններիս բաժանվել է 9600 (Mascot) տեղեկատվական փաթեթ: Թվով 112 ուսանող ներգրավված են եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, ինչը նպաստել է ընտրական գործընթացների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Ընտրական գործընթացների մոնիթորինգ իրականացնելու նպատակով վերապատրաստվել է 10 երիտասարդ, ովքեր երիտասարդ ընտրողների համար իրականացրել են առանձին հաղորդակցման միջոցառումներ, այդ թվում՝ TIAC-ի բարբառներին նվիրված տեսանյութը, ընտրողների առցանց ուսուցման հարթակի մեկնարկը, Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ հանդիպումը, ԿԸՀ խորհրդանիշով բրենդավորված տեղեկատվական նյութերի (բանալիների

կախազարդեր, կպչուն պիտակներ և այլն) տարածումը՝ առաջին անգամ քվեարկող երիտասարդների շրջանում:

Բոլոր ուսումնադիդակտիկ նյութերը հրապարակվելուց հետո տեղադրվել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և դրանց մասին տրվել են մամուլի հաղորդագրություններ:

Նման համընդգրկուն արշավն ապահովեց ընտրական գործընթացում ներգրավված բոլոր խմբերի ներկայացուցիչներին, այդ թվում՝ երիտասարդների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին առավել մատչելի և ընդգրկուն ծանոթանալ քվեարկության կարգին և հնարավորինս արդյունավետ իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին, հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվել են Ընտրական օրենսգրքեր և ուղեցույցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարբերական հանդիպումներ և քննարկումներ է անցկացրել ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների հետ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել է ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգ, որին մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցներն, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպման նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը առանձնակի ուշադրություն է դարձվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի աշխատանքներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին, կայքի մշտական և անբաժանելի մասը կազմող՝ ընտրողների ռեգիստրին՝ ըստ տեղամասերի, իսկ ըստ ընտրական տեղամասերի՝ ընտրողների նախնական և վերջնական ցուցակներին հնարավոր էր ծանոթանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում, որոնք տեղադրված են եղել ներբեռնելու հնարավորությամբ:

Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան մշակված և գործարկված ծրագրային միջոցներով ապահովվել են մի շարք գործառույթներ, օրինակ՝

- ըստ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման իրականացումը՝ օգտագործելով պատահականության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված որակական չափանիշներին համապատասխան ընտրանքի հնարավորությունը.

- վարչական վարույթներով ծանուցումների կազմակերպումը և վարչական վարույթի նյութերի հանրայնացումը,

- արտերկրից առցանց քվեարկության նպատակով գործարկվել է էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը, որն իր մեջ ընդգրկում է կոդավորման միջոցները, էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորումը, օգտվողների (առցանց քվեարկելու իրավունք ունեցողների) գրանցումը, գրանցված օգտվողների կողմից սեփական կոդերի ներմուծումը, նրանց կողմից էլեկտրոնային քվեարկության իրականացումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեարկության արդյունքների ամփոփումը, ելքային փաստաթղթի ձևավորումը, արդյունքների հրապարակման հնարավորությունը:

Վերամշակվել և ներդրվել են քվեարկության օրը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորությունները՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրատեխնիկական միջոցներ:

Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների ժամանակ 300-ից ավելի ընտրող ունեցող բոլոր ընտրական տեղամասերից՝ թվով 1757 տեղամաս, որը 245-ով ավելի է նախորդ խորհրդարանական ընտրությունների համեմատ, իրականացվել է քվեարկության ամբողջ ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում, ինչպես նաև բոլոր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի և վերահաշվարկի աշխատանքների տեսաձայնանկարահանում և հեռարձակում ուղիղ ժամանակային ռեժիմում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր էր հետևել տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների առցանց հեռարձակմանը՝ բոլոր 1757 տեղամասերից, որոնց ընդհանուր հեռարձակման տևողությունը կազմել է մոտ 82.579 ժամ:

Ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին տրամադրվել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների և բոլոր հեռարձակվող տեղամասերի բոլոր հեռարձակումների միաժամանակյա դիտման, պատկերի խոշորացման (zoom), ներբեռնման, ինչպես նաև պահպանված նյութերի դիտման հնարավորություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ընտրական գործընթացների մատչելիության, գենդերային հավասարության, հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելուն: Մասնավորապես, իրականացվել է ընտրական տեղամասերի հասանելիության համապետական գնահատում՝ ընդգրկելով թվով 1996 տեղամասերը: Կազմավորված ընտրական տեղամասերից 621-ը գնահատվել են որպես ներառական, որոնցից 533-ը՝ ամբողջությամբ հասանելի, 88-ը՝ մասնակիորեն հասանելի: Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը քվեարկության օրվանից 40 օր առաջ հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում գործել է նաև մատչելի տեղամասերի հրապարակման գործիք, որի միջոցով հնարավոր էր քարտեզի վրա տեսնել այն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրերը, որոնք հարմարեցված են նման խնդիրներ ունեցող անձանց համար, որպեսզի ցանկության դեպքում փոխեն իրենց տեղամասային կենտրոնը՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Կույր և տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար պատրաստվել և ընտրական թվով 2005 տեղամասերին են տրամադրվել բրայլյան հատուկ կաղապարներ, որոնք ապահովել են ինքնուրույն քվեարկության իրականացումը, բրայլյան տպագրությամբ, ինչպես նաև խոշոր տառաչափով տպագրվել են կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումների ցուցակը, կույր և տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար պատրաստված ուղեցույցներն ու իրազեկման այլ նյութեր:

Քվեարկության կարգին վերաբերող տեղեկատվական նյութեր են մշակվել ազգային փոքրամասնությունների չորս լեզուներով՝ եզդիերեն, քրդերեն, ասորերեն և ռուսերեն: Առաջին անգամ դրանք հասանելի են եղել նաև արևմտահայերեն:

Ընտրողների իրազեկվածության բարձրացման նպատակով մշակվել է 10 ուղեցույց և ձեռնարկ՝ հաշմանդամության տարբեր տեսակի խնդիրներ ունեցող ընտրողների համար: Բացի այդ, պատրաստվել և տարածվել են տեղեկատվական նյութեր տարբեր ձևաչափերով՝ աուդիոուղեցույցների, հեշտ ընթեռնելի նյութերի, ինֆոգրաֆիկաների և մուլտիմեդիաի միջոցով: Ընտրական իրավունքների և ընտրական գործընթացներին մասնակցության վերաբերյալ իրազեկման միջոցառումներին ներգրավվել է հաշմանդամություն ունեցող ավելի քան 200 անձ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունների հետ համագործակցությամբ ձևավորվել են ընտրական գործընթացների մատչելիության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ:

Կանանց և խոցելի խմբերի ընտրական մասնակցության խթանման նպատակով աջակցություն է տրամադրվել քաղաքացիական հասարակության երեք կազմակերպությունների: Իրականացվել են համայնքային քննարկումներ, խորհրդատվություններ և իրազեկման արշավներ՝ ընդգրկելով հաշմանդամություն ունեցող անձանց, կին ընտրողների, գյուղական բնակավայրերի կանանց, երիտասարդների և առաջին անգամ քվեարկողների: Արդյունքում՝ մշակվել են

տեսանյութեր, ինֆոգրաֆիկաներ, ուսումնական նյութեր և այլ հաղորդակցական գործիքներ:

Ընտրական գործընթացների մատչելիության, սոցիալական ներառման և գենդերային հավասարության հարցերի շուրջ կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ և աշխատաժողովներ՝ պետական մարմինների, ուսանողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին առաջադրվել էր 17 կուսակցություն և կուսակցությունների 2 դաշինք: Ընտրություններին առաջադրված 17 կուսակցությունները և կուսակցությունների 2 դաշինքները գրանցվել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ին ՀՕ-202-Ն սահմանադրական օրենքով կատարվել էին մի շարք փոփոխություններ և լրացումներ: Ի թիվս այլ իրավահարաբերությունների, որոնք ենթարկվել էին նոր կանոնակարգումների փոփոխության էին ենթարկվել նաև Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում առնվազն առաջին երեք տասնյակ թեկնածուները, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում մինչև երեք տասնյակ թեկնածուները պետք է հաստատվեն և առաջադրվեն կուսակցության համագումարի որոշմամբ:

Ազգային ժողովի ընտրություններին առաջադրված բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ընտրություններին մասնակցելու մասին դիմումը և պահանջվող կից փաստաթղթերը ներկայացրել են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող 17 կուսակցությունների և կուսակցությունների 2 դաշինքների ընտրական

ցուցակներում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 2.107 պատգամավորի թեկնածուներ, որոնցից 1.309-ը տղամարդ, 798-ը՝ կին:

Ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուն կարող է ընդգրկվել նաև ընտրական ցուցակի առաջին մասում:»: Երեք կուսակցության՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն և կուսակցությունների երկու դաշինքի՝ Ուժեղ Հայաստան դաշինք, Հայաստան դաշինք ընտրական ցուցակներն են ունեցել երկրորդ մասեր, որոնցում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 21 թեկնածու, որոնցից 6-ը կին:

Ընտրական օրենսգրքի 86-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել է ընտրական ցուցակներում ընդգրկված թվով 23 թեկնածուի գրանցումը, որոնցից 9-ը՝ կին թեկնածու:

Ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի մասին դիմումների հիման վրա ընտրական ցուցակներում ընդգրկված թվով 85 թեկնածուների գրանցում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած, և մեկ թեկնածուի գրանցում ճանաչվել է անվավեր:

Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կամ դաշինքի անդամ կուսակցությունները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, իրավունք ունեն դիմում ներկայացնելու ինքնաբացարկի մասին:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը 2026 թվականի մայիսի 25-ին ներկայացրել էր ինքնաբացարկի դիմում, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից բավարարվել է և 2026թ. մայիսի 26-ի թիվ 211-Ա որոշմամբ «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը ճանաչվել է ուժը կորցրած:

Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:»: Նախընտրական քարոզչության համար Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչը բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովվել է հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թվով 738, որից 21-ը՝ Երևանում),

- համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացված անվճար վահանակների ցանկը (ընդհանուր թվով՝ 1312, որից 198-ը՝ Երևանում),

- նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկությունները,

- հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, ինչպես նաև նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մյուս տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս բոլոր հեռարձակողների վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ ըստ նախապես ներկայացված հայտերի Կենտրոնական ընտրական

հանձնաժողովն իրականացրել է 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակների բաշխումը՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների միջև:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերաժամերից ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը մշակել, հրապարակել և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, որը հրապարակվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման՝ նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Ազգային ժողովի հերթական ընտրություններում գրանցված բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, ինչպես և պահանջվում է Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով՝ նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից ստացել է նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլ ֆինանսական փաստաթղթեր):

Միաժամանակ, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ, ընտրական ցուցակների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել այն բանկերից, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշիվներ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփել է այդ տվյալները, կազմել ամփոփ տեղեկանք, որը տեղադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացրել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփել է այդ տվյալները, կազմել ամփոփ տեղեկանք, որը տեղադրվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերին կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով բանկերից ստացված տվյալների հետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որը հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողական այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում: Բացի այն, որ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, բանկերից ստացած տեղեկանքները և վերջիններիս ուսումնասիրության արդյունքում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմված ամփոփ տեղեկանքը հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային

կայքում, և այդ գործընթացի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն են ունեցել Ազգային ժողովում գործող երկու խմբակցությունների կողմից նշանակված աուդիտորի որակավորում ունեցող մեկական աուդիտոր: Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումներ վերաբերվել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն կամ այլ մասնավոր դեպքերի, որոնք որևէ ազդեցություն չեն ունեցել ընտրության արդյունքի վրա:

Քվեարկություն

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների անցկացման նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2005 ընտրական տեղամաս, որից 9-ը քրեակատարողական հիմնարկներում:

Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշման համաձայն՝ Ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ի ընտրություններում կազմավորված թվով 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 1331-ական,

«Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 543-ական,

«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք՝ 131-ական:

2026 թվականի հունիսի 4-ին «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով համալրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում առկա 60 թափուր տեղ, որից 10-ը՝ նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Հայաստան» կուսակցությունների դաշինք, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ:

Ստորև ներկայացվում են նաև տվյալներ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, քարտուղարների և անդամների վերաբերյալ՝

Նշանակել է	Բաշխմամբ	Նախագահ	Քարտուղար	Անդամ
ՔՊԿ	1331	1312	1305	1308

ՀԱՅԱՍՏԱՆ	543	488	491	2444
ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ	131	127	123	3119
ԸԸՀ	0	0	0	3827
ԸԸՀ նախագահ	0	78	86	1207
Ընդամենը	2005	2005	2005	11905

Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 1996 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված թվով 16.040 քաղաքացիներից քվերակության օրը բացակայել են տեղամասային ընտրական հանձնաժողովի 125 անդամներ: Տեխնիկական սարքավորումները սպասարկող և դրանց աշխատանքը կազմակերպող 4.128 մասնագետների բացակայության դեպք չի արձանագրվել:

Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք Տեղեկանքը սոսնձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Ընդհանուր թվով 4000 տեխնիկական սարքավորումներից ընդամենը մոտ 8-ը տեխնիկական պատճառներով պայմանավորված չեն տպել նշված տեղեկանքը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով 2021 թվականին իրականացված տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման փոփոխությամբ (քվեարկության նախորդ օրը տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներն իրականացնում են տպիչի ստուգում) պայմանավորված 2026 թվականի ընտրությունների ժամանակ բոլոր 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը՝ ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի, մարզկենտրոնների, 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների և Երևան քաղաքի, հրապարակել է տեղեկություններ՝ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք, ըստ ընտրական տեղամասերի, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նշված տվյալները հրապարակվել են հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի ուղիղ եթերով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նստավայրից:

Քվեարկության օրը հանրապետության 2005 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների թվով 25.049 վստահված անձ: Թվով 2003 ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 16.129 տեղական և միջազգային դիտորդներ, ՀԼՄ 1.582 ներկայացուցիչներ, ինչպես նաև թվով 648 այցելու:

Ընտրական օրենսգիրքը սահմանել էր կանոնակարգումներ, համաձայն որի դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ քարոզչություն կատարելու, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ: Ընտրական հանձնաժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է վերադաս ընտրական հանձնաժողովին (հոդված 31, մաս 5, 8):

Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ: Հանձնաժողովի նախագահի կողմից վստահված անձին տեղամասային կենտրոնից կամ հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրվելու

դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները (հոդված 34, մաս 4):

Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը (հոդված 65, մաս 7): Թվով 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովներից և որևէ մեկի կողմից այս իրավանորմերը չեն կիրառվել:

Քվեարկության արդյունքերի ամփոփում

Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին, հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս, որից հետո հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ճեղքը:»:

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են 2003 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Երկու ընտրական տեղամասերում՝ թիվ 10/51 և թիվ 35/65, չի պահպանվել Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը: Թիվ 35/65 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրվել էր, որ ժամը 20:00-ից հետո ընտրական տեղամասի դուռը փակված չի եղել և քվեարկությունն ավարտվել է միայն 23:38-ին: Նմանօրինակ իրավիճակ է արձանագրվել նաև թիվ 10/51 ընտրական տեղամասում և թիվ 10/51 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրվել է, որ քվեարկության գործընթացն ավարտվել է միայն 21:22:15-ին:

Այդուհանդերձ, բոլոր 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովները, Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 12

ժամվա ընթացքում, ավարտել են տեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00.00-ից սկսած, իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների՝ հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակելով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները:

Քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ավարտել էր քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումը և ներբեռնելու հնարավորությամբ տեղադրել էր հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 36 ժամ հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվել էին բոլոր ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների սկանավորված քաղվածքները, որոնց հրապարակայնացման մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով:

Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Ընտրական տեղամասերի շուրջ 99,9%-ում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ներկա են գտնվել քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացին: 2005 ընտրական տեղամասերից 1757-ում քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացին հնարավոր էր հետևել առցանց՝ տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների միջոցով: Հարկ է նկատել, որ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ունեին ավելի լայն հնարավորություններ տեսախցիկներից օգտվելու համար:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահազանգ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի

տրվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է տեղեկանք, որում նշվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով: Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում՝ այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում: Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում:

Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և ընտրություններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի: Նշված տեղեկանքը չտպագրվելու կամ իրավասու անձանց չտրամադրելու որևէ դեպք առկա չի եղել:

Քվեարկության մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում՝ բացառությամբ՝ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ցուցակների: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն.

«Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական

հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

Ընտրողների ստորագրված ցուցակները սահմանված կարգով և ժամկետներում տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նշվածի մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամանակահատվածից հետո, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չի ստացվել որևէ դիմում այլ անձի փոխարեն քվեարկելու մասին:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել

ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը իրավունք ունեն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում: Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ կարող է ներկայացվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ՝ ընտրության արդյունքներն ամփոփելու ժամկետից մինչև 3 օր առաջ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն առաջին հերթին վերահաշվարկել են այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ իրավասու սուբյեկտների կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են վերահաշվարկի դիմումներ:

Թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ներկայացվել է վերահաշվարկ իրականացնելու պահանջով թվով 30 դիմում: Սահմանված ժամկետում և կարգով իրավասու սուբյեկտների կողմից ներկայացված դիմումներով իրականացվել է վերահաշվարկ, այլ դեպքերում՝ վերահաշվարկի պահանջով դիմումները մերժվել են, սակայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները սեփական նախաձեռնությամբ իրականացրել են համապատասխան ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերով վերապահված լիազորությունների շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 10-ի «Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնելու պահանջի մասին» N 249-Ա որոշմամբ պահանջել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից իրականացնել ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Մասնավորապես՝

1) արձանագրված վավեր և անվավեր քվեաթերթիկների գումարի թիվը պակաս է արձանագրված մասնակիցների թվից: Նշված հիմքով վերահաշվարկվել են թվով 19 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներ,

2) անճշտությունների թիվը գերազանցում է 4-ը: Նշված հիմքով վերահաշվարկվել են թվով 11 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներ,

3) անվավեր քվեաթերթիկների թիվը գերազանցում է այլ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրություններում արձանագրված անվավեր քվեաթերթիկների միջինացված ցուցանիշի հիմքով վերահաշվարկվել են թվով 4 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներ:

Վերահաշվարկվել են նաև թվով 32 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացված դիմումներով արտահայտվել էին մտահոգություններ և կասկածներ՝ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ:

Թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները երրորդ հերթին վերահաշվարկել են վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները:

Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների հաշվառմամբ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրականացրել են թվով 637 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Համաձայն նշված իրավադրույթի՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն,

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին,

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:

Ուշագրավ է, որ նման իրավունք վերապահվում է թե՛ ընտրություններին մասնակցող կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), և թե՛ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուին: Ի դեպ, բնավ պարտադիր չէ նրանց՝ տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու հանգամանքը:

Ընդհանուր թվով 2005 տեղմասերից, ընդամենը՝ 11 տեղամասում ներկա չեն գտնվել վստահված անձինք և միայն 2-ում՝ 14/48 և 14/53 չի այցելել վստահված անձ և դիտորդ: Հարկ է նկատել, որ բացի 14/48 ընտրական տեղամասից, մյուս բոլոր տեղամասերից (7/17, 7/20, 14/53, 17/9, 17/27, 17/63, 17/66, 33/22, 35/63 և 38/7) ապահովվել է քվեարկության ընթացքի ուղիղ հեռարձակումը:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ուներ թվով 18 կուսակցություն և կուսակցությունների դաշինք: Նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 2.028 թեկնածու, տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված ընդհանուր թվով 15.915 անդամ, առնվազն 25.000 վստահված անձ: Այլ կերպ ասած՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող մոտ 42.900 սուբյեկտների կողմից, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու վերաբերյալ որևէ դիմում չի ներկայացվել:

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով 2026թ. հունիսի 9-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է Ուժեղ Հայաստան դաշինքի լիազոր ներկայացուցչի դիմումը հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով, որ հունիսի 7-ին կազմակերպված Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախնական ամփոփված արդյունքների արդյունքում հրապարակված անվավեր քվեաթերթիկների քանակն /17097 քվեաթերթիկ/ էականորեն ավել են եղել նախորդ 2 համապետական ընտրությունների ընթացքում արձանագրված անվավեր քվեաթերթիկների արդյունքներից /2021թ.՝ 4593 քվեաթերթիկ, 2018թ. 4706՝ քվեաթերթիկ/, խնդրում եմ ապահովել անվավեր քվեաթերթիկների վերահաշվարկը:

Միաժամանակ, պահանջում ենք անվավեր ճանաչել 12/13 ընտրատեղամասի արդյունքները՝ հաշվի առնելով, որ բազմաթիվ ահազանգերի արդյունքում՝ արձանագրումներ են եղել, որ 8-րդ համարի՝ Ազգային ժողովրդական բևեռ

համահայկական կուսակցության քվեաթերթիկը տեղադրված չի եղել քվեաթերթիկների սեղանին և չի տրամադրվել ընտրողներին:»:

Նույն օրը՝ 2026թ. հունիսի 9-ին, դիմումատուն տեղեկացվել է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է այն ընտրական հանձնաժողովը, որի իրավասության սահմաններում է ներկայացված դիմումով բարձրացված հարցի լուծումը:

Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանվում է. «Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը:»:

Դիմումով ներկայացվել է թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և անվավեր քվեաթերթիկները վերահաշվարկելու պահանջ: Դիմումը ներկայացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, մինչդեռ հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին պարբերության կանոնակարգումները, այն պետք է ներկայացվեր թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում ևս կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Այնուհանդերձ, թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ 2026թ. հունիսի 12-ի «Սեփական նախաձեռնությամբ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին» N 14-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 12-ի «Սեփական նախաձեռնությամբ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին» N 14-Ա որոշումը վարչական կամ դատական կարգով չի բողոքարկվել:

Թիվ 35/65 և 10/51 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ: Նախապես համապատասխան ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովները գտել էին, որ տեղամասային գրանցամատյաններում արձանագրված հանգամանքները չէին կարող ազդել արդյունքների վրա: Սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, գործելով իր վերահսկողական լիազորությունների շրջանակում, վերանայել է այդ որոշումները և եկել հակառակ իրավական եզրահանգման:

Թիվ 35/65 ընտրական տեղամասի դեպքում՝ գրանցամատյանում արձանագրվել էր, որ ժամը 20:00-ից հետո ընտրական տեղամասի դուռը փակված չի եղել և քվեարկությունն ավարտվել է միայն 23:38:34-ին: Նմանօրինակ իրավիճակ է արձանագրվել թիվ 10/51 ընտրական տեղամասում: Գրանցամատյանի ուսումնասիրությունից հետևում է, որ քվեարկության գործընթացն ավարտվել է միայն 21:22:15-ին:

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերապահված վերահսկողական լիազորությունը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերանայել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 11-ի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի N 10-Ա որոշումը վերանայելու մասին» N 254-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայացած հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը արձանագրված խախտումների վերաբերյալ» N 10-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության նախորդ և քվեարկության օրը՝ հունիսի 7-ին արձանագրված խախտումները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ քվեարկության արդյունքների վրա» թիվ 35/65 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների մասով, և նույն որոշման 2-րդ կետով անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 35 ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 35/65 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 11-ի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի N 8-Ա որոշումը վերանայելու մասին» N 255-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը արձանագրված խախտումների վերաբերյալ» N 8-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 07.06.2026թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ քվեարկության արդյունքների վրա» թիվ 10/51 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների մասով, և նույն որոշման 2-րդ կետով անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 10/51 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 11-ի N 254-Ա որոշումը բողոքարկվել է դատական կարգով և ՀՀ վարչական դատարանի 2026 թվականի հունիսի 13-ի N ՎԴ/9914/05/26 գործով կայացված դատական ակտով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, Հայաստան դաշինք, Ուժեղ Հայաստան դաշինք՝ 11.06.2026թ. թիվ 254-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժվել է: Դատական կարգով բողոքարկվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 11-ի N 255-Ա որոշումը և ՀՀ վարչական դատարանի 2026 թվականի հունիսի 13-ի N ՎԴ/9915/05/26 գործով կայացված դատական ակտով՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հայցն

ընդդեմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք Ուժեղ Հայաստան դաշինքի, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և Հայաստան դաշինքի՝ 11.06.2026 թվականի թիվ 255-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ մերժվել է:

Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու հետևանքով, Ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն, թիվ 35/65 ընտրական տեղամասի քվեարկության մասնակիցների թիվը՝ 1 315, և թիվ 10/51 ընտրական տեղամասի քվեարկության մասնակիցների թիվը՝ 1 271, արձանագրվել են որպես համապատասխան տեղամասերի անճշտությունների գումարային չափ, իսկ մնացած արդյունքները, բացառությամբ՝ անճշտությունների չափի, արձանագրվել են՝ զրո:

Վերոնշյալ երեք ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչումն ինքնին կասկածի տակ չեն դրել ընտրությունների վերջնական արդյունքները: Հակառակը՝ այն ցույց է տալիս, որ ընտրական վարչարարությունն առանձնացրել է կոնկրետ խնդրահարույց տեղամասերը, չեզոքացրել դրանցում տեղի ունեցած՝ ընտրական օրենսդրությանը չհամապատասխանող քվեարկության հնարավոր ազդեցությունը վերջնական արդյունքների վրա և այդ առանձին դրվագները չի տարածել այն տեղամասերի վրա, որտեղ նման իրավական հիմքեր չեն արձանագրվել:

Երեք ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչումն ինքնին չի ենթադրել այդ տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու անհրաժեշտություն: Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ վերաքվեարկություն կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ արձանագրված խախտումները կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, և երբ այդ խախտումների հետևանքները հնարավոր է շտկել առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եզրահանգմամբ Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների նախապատրաստման, քվեարկության, ձայների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում չեն հաստատվել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել համապետական ընտրությունների վերջնական արդյունքների վրա: Միաժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրել է, որ երեք ընտրական տեղամասերում քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի կոպիտ խախտումներ, և այդ տեղամասերի նկատմամբ կիրառել է օրենքով նախատեսված իրավական հետևանքը:

Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի կիրառման համար էական է ոչ թե այն, որ խախտումը կարող էր ազդել կոնկրետ ընտրական տեղամասի արդյունքի վրա, այլ այն, թե արդյոք այն կարող էր փոխել ընտրությունների համապետական վերջնական իրավական արդյունքը: Այդ ազդեցությունը գնահատվում է ոչ թե ենթադրությունների, այլ ընտրությունների արդյունքների հաշվարկային մեխանիզմի միջոցով:

Վերաքվեարկությունը իրավաչափ կարող է լինել միայն այն դեպքում, երբ տվյալ պայմաններում ապահովվում է ազատ և հավասար ընտրական իրավունքների իրական իրացումը: Եթե ընտրությունների ընդհանուր արդյունքն արդեն հայտնի է, և վերաքվեարկության մասնակից ընտրողները քվեարկում են այլ տեղեկատվական ու քաղաքական միջավայրում, անհրաժեշտ է գնահատել՝ արդյո՞ք այդ քվեարկությունը պաշտպանում է ընտրական իրավունքները: Այդ պայմաններում վերաքվեարկությունը կարող էր լուրջ մտահոգություններ առաջացնել տակտիկական քվեարկության և ընտրողների անհավասար տեղեկատվական միջավայրի համատեքստում:

Վերաքվեարկություն չնշանակելը չի նշանակում, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անտեսել է խախտումները: Հակառակը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանց տվել է օրենքով նախատեսված համաչափ հետևանք՝ խնդրահարույց ընտրական տեղամասերի արդյունքները դուրս թողնելով վերջնական ձայների հաշվարկից և դրանք արձանագրելով որպես անճշտություններ:

Վենետիկի հանձնաժողովի մոտեցումը հաստատում է, որ վերաքվեարկությունը չի կարող կիրառվել մեխանիկորեն: Ըստ այդ մոտեցման՝ եթե խախտումները սահմանափակվել են առանձին ընտրական տեղամասերով, իրավական արձագանքը, սկզբունքորեն, կարող է սահմանափակվել հենց այդ տեղամասերով: Սակայն վերաքվեարկությունը պատշաճ միջոց չէ, եթե տակտիկական քվեարկության ռիսկի պատճառով չի կարող երաշխավորել արդար ընտրական արդյունք:

«Սահմանադրական դատարանների կողմից ընտրությունների արդյունքների չեղարկման մասին» իր հրատապ զեկույցում՝ CDL-AD (2025)003, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ եթե խախտումները սահմանափակվել են որոշ ընտրական տեղամասերով, ապա կարող է վերաքվեարկություն նշանակվել միայն այդ ընտրական տեղամասերում, բացառությամբ, եթե այդ տեղամասերում կրկնակի քվեարկությունը հնարավոր տակտիկական քվեարկության պատճառով չի երաշխավորի ընտրությունների արդար արդյունքը[1]:

[1] Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2025)003, պարբերություն 60, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2025)003-e

Այս ռիսկը հատկապես ակնհայտ է, երբ ընտրությունների գրեթե ամբողջական արդյունքն արդեն հայտնի է: Արդյունքում քվեարկությունը կարող է դառնալ ոչ թե ընտրողի նախնական քաղաքական նախապատվության բնական արտահայտություն, այլ հայտնի արդյունքի վրա թիրախավորված ազդեցություն գործադրելու միջոց:

Ընտրական խախտումների հետևանքները գնահատելիս չպետք է անտեսվեն այն ընտրողների իրավունքները, որոնք արդեն օրինական կերպով արտահայտել են իրենց կամքը: Մասնակի վերաքվեարկությունը կարող է ազդել այդ կամքի վրա, եթե այն անցկացվում է այնպիսի պայմաններում, երբ արդյունքներն արդեն հայտնի են, և առանձին ընտրողների խմբին տալիս է երկրորդային, հաշվարկված ազդեցություն գործադրելու հնարավորություն:

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» տրամաբանությամբ՝ ընտրությունների արդյունքների ամբողջական կամ մասնակի չեղարկումը պետք է լինի բացառիկ և համաչափ միջոց: Գլխավոր չափանիշն այն է, թե արդյոք խախտումները կարող էին ազդել ընտրությունների իրավական արդյունքի վրա2:

Վերաքվեարկությունը միշտ չէ, որ ընտրական իրավունքների պաշտպանության լավագույն միջոցն է: Այն կարող է համաչափ լինել միայն այն դեպքում, երբ իրականում ունակ է վերականգնել ընտրողների ազատ և հավասար կամարտահայտությունը՝ առանց նոր և ավելի մեծ ընտրական աղավաղումներ ստեղծելու:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական

[2] Վենետիկի հանձնաժողով, «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք», Ուղեցույց II.3.3.e., https://www.venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Code_conduite_PREMS%20026115%20GBR.pdf

հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:

Թվով 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն թվով 607 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են թվով 1218 գրառումներ, իսկ 1398 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Բոլոր 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 07.06.2026թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա՝ մեկ բացառությամբ՝ թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 13-Ա որոշմամբ արձանագրվել է, որ «թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 07.06.2026թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ քվեարկության արդյունքների վրա, բացառությամբ՝ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների»: Թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 12.06.2026թ. թիվ 14-Ա որոշմամբ ճանաչվել են անվավեր:

Դիմում բողոքների քննարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

Հանրապետության Նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի «Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-21-Ն հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 07.02.2026թ.-ից մինչև քվեարկության օրը՝ 07.06.2026թ., Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են 600-ից ավելի դիմումներ, բողոքներ, հարցումներ, գրություններ (այսուհետ՝ դիմում), որոնցից՝

- քաղաքացիների կողմից՝ 280-ից ավելի դիմում, որոնցով հիմնականում հայցվել են պարզաբանումներ և բացատրություններ՝ ընտրողների ցուցակում ընդգրկվելու, ընտրական տեղամասը փնտրելու, ըստ գտնվելու վայրի կամ մատչելի տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու, էլեկտրոնային քվեարկության, ՀՀ տարածքից դուրս գտնվող ընտրողների քվեարկելու կարգին առնչվող հարցերի վերաբերյալ,
- զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից՝ թվով 81 դիմում՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին հավատարմագրելու և տեղեկատվության հարցման պահանջներով,
- հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների կողմից՝ 76 դիմում, որոնցից 13-ը՝ դիտորդներին հավատարմագրելու, 28-ը՝ պարզաբանում ներկայացնելու կամ տեղեկատվություն տրամադրելու, 12-ը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների, 23-ը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հասցեագրված տեղեկատվության տրամադրման պահանջով,
- թեկնածուների կողմից՝ 86 դիմում ինքնաբացարկի մասին,
- կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից՝ 72 դիմում, որոնցից 19-ը՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու մասին, 1 դիմում՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ինքնաբացարկի մասին, 3 դիմում՝ ընտրություններին չմասնակցող կուսակցությունների կողմից, 31 դիմում և միջնորդություն՝ պարզաբանում կամ տեղեկատվություն տրամադրելու կամ նիստը հետաձգելու պահանջների մասին, 19

դիմում՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների մասին:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված դիմումների քննարկման արդյունքներով սահմանված կարգով կայացվել են որոշումներ, տրվել են պատասխաններ կամ դիմումները վերահասցեագրվել են իրավասու պետական մարմիններին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը՝ 07.06.2026թ., էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ստացվել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հասցեագրված թվով 23 դիմում՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից ստացվել է 22 դիմում՝ քվեարկության օրը տեղի ունեցած ենթադրյալ խախտումների վերաբերյալ՝ հասցեագրված թիվ 2, 4, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 21, 22, 16, 24, 25, 29, 30, 33, 34, 35, 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին: Նշված դիմումների քննարկմամբ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն օրենքով սահմանված կարգով կայացրել են որոշումներ:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովներում ստացվել է թվով 52 դիմում, որոնցից 23-ը ներկայացվել են քվեարկության օրը՝ 2026 թվականի հունիսի 7-ին՝ մինչև ժամը 22:00-ն: Քվեարկության օրը ներկայացված դիմումներից թվով 7-ը ներկայացվել են ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից. մեկ դիմում՝ «Դեմոկրատիա, Օրենք, Կարգապահություն» կուսակցության և 6 դիմում՝ Ուժեղ Հայաստան կուսակցությունների դաշինքի կողմից, 5-ը՝ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և 11-ը՝ քաղաքացիների կողմից: Քվեարկության օրը ստացված դիմումներով կատարվել են ուսումնասիրություններ, որպես օպերատիվ լուծում պահանջող հարցեր գնահատված հանգամանքներով ձեռնարկվել են միջոցներ, ըստ անհրաժեշտության, տրվել են պատասխաններ:

Քվեարկության օրվան հաջորդող օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներկայացվել է թվով 29 դիմում ՝

- «Ականատես» համատեղ դիտորդական առաքելության կողմից՝ 2 դիմում-բողոք, որոնցով բողոքարկվել են թիվ 16 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 12.06.2026թ. թիվ 6-Ա որոշումը և թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 11.06.2026թ. թիվ 10-Ա որոշումը: Նշված դիմում-բողոքների քննությամբ կայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 13-ի թիվ 256-Ա և 257-Ա որոշումները:

- «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման հասարակական կազմակերպության, «Ականատես» և «Ազատ քվե» համատեղ դիտորդական առաքելությունների կողմից՝ տեղեկատվության կամ փաստաթղթերի տրամադրման մասին 3 դիմում, ինչպես նաև 1-ական դիմում քվեարկության օրը տեղի ունեցած ենթադրյալ խախտումների մասին դիմումներ՝ «Ազատ քվե» դիտորդական առաքելության և «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից, որոնց տրվել են պատասխաններ,

- քաղաքացիների կողմից՝ 5 դիմում և թեկնածուի կողմից՝ 2 դիմում, որոնց տրվել են պատասխաններ,

- ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով 2 դիմում՝ Ուժեղ Հայաստան կուսակցությունների դաշինքի և «Միասնության թևեր» կուսակցության կողմից,

- Հայաստան կուսակցությունների դաշինքի կողմից տեղեկատվություն կամ փաստաթղթեր տրամադրելու մասին՝ 3 դիմում և 1 դիմում՝ քվեարկության արդյունքների արձանագրություններում հայտնաբերված անճշտությունները շտկելու պահանջի մասին,

- Ուժեղ Հայաստան դաշինքի կողմից 6 դիմում՝ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները տրամադրելու, առանձին տեղամասերում վերահաշվարկ կատարելու կամ առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով, որոնց տրվել են պատասխաններ,

- «Քոչարի Ազգային Վերածնունդ և Ազգի Զարթոնք» կուսակցության կողմից 1 դիմում և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից 2 դիմում՝ առանձին

ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրություններում անճշտությունների վերաբերյալ, որոնց հաշվառմամբ, ըստ անհրաժեշտության, կատարվել են շտկումներ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 2026 թվականի հունիսի 6-ի ՆՀ-63-Ա հրամանով Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություն-ների քվեարկության օրը էլեկտրոնային կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում ներկայացվող, թեժ գծով ստացված տեղեկությունների հավաստիությունը պարզելու, դրանց վերաբերյալ պարզաբանումներ կամ տեղեկություններ տրամադրելու, նշված տեղեկատվությունը համակարգելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծությունների կենտրոն, որի աշխատանքները համակարգել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

Ստացված տեղեկությունները տեսակավորվել, ուսումնասիրվել և քննարկվել են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում զետեղված է եղել թեժ գծի մեկ հեռախոսահամար, որին միաժամանակ պատասխանելու հնարավորություն տրված էր երեք օպերատորների: Ըստ անհրաժեշտության, հեռախոսազանգերը վերահասցեագրվել են համապատասխան մասնագետներին: Հեռախոսազանգերին տրվել են պատասխաններ, լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող հարցերի դեպքում՝ զանգահարողից վերցվել են կոնտակտային տվյալներ՝ հարցի կապակցությամբ պատասխաններ, լրացուցիչ պարզաբանումներ տալու համար:

Իրավիճակային վերլուծությունների կենտրոնի կողմից ներկայացված տեղեկությունների ստուգման արդյունքները ներկայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, դրանց վերաբերյալ տրվել են պարզաբանումներ, որոնք արտացոլվել են Իրավիճակային վերլուծությունների կենտրոնի կողմից լրացվող

աղյուսակում, որը զետեղված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացվել է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ 101 հայցադիմում: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ ԴԴԱ-5-Ե-17827/26 գրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացվել է, որ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների անցկացմամբ պայմանավորված 2026 թվականի հունիսի 14-ի, ժամը՝ 14:00-ի դրությամբ Վարչական դատարանում ստացված թվով 101 հայցադիմումներից 61-ը՝ վերադարձվել է, 8-ի՝ ընդունումը մերժվել է, 4-ը՝ բավարարվել է, 1-ը՝ բավարարվել է մասնակի, 27-ը՝ մերժվել է:

Ընտրությունների արդյունքների բողոքարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն. «Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է երկու դիմում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին: Դիմումները ներկայացվել են Ուժեղ Հայաստան կուսակցությունների դաշինքի և «Միասնության թևեր» կուսակցության կողմից:

Ներկայացված բոլոր դիմումները Ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի նիստում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն. «Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, 97-րդ հոդվածի 3-րդ մասով, 99-րդ հոդվածով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումներ սահմանադրական դատարան կարող են ներկայացվել համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն:»:

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներով ընդունված թիվ 259-Ա որոշումը վիճարկվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան ընտրություններին մասնակցող՝

Ուժեղ Հայաստան կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքի, «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության կողմից:

Դիմումների քննության արդյունքում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2026 թվականի հուլիսի 4-ի ՍԴՈ 1835 որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 100-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2026 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» N 259-Ա որոշումը՝ 2026 թվականի հուլիսի 21-ին կազմել է «Ընտրված Ազգային Ժողովի պատգամավորներ գրանցելու և մանդատներ տրամադրելու մասին» N 1 արձանագրությունը: